ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆ ԱՇԽԱՐՀԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ «ԱՐԱՏԱՎՈՐ ՇՐՋԱՆԸ»

Նարեկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2019 թ., ավարտելով ՀՊՏՀ-ն, ընդունվել է ասպիրանտուրա: 2016-2018 թթ. եղել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, ապա փորձագետ:

Վերապատրաստումներ է անցել աշխարհի տարբեր երկրների հեղինակավոր կազմակերպություններում:

Հիմնաբառեր. *թուրքական լիրա, կապիտալի արտահոսք, «փխրուն» տնտեսություն, էժան վարկավորում, պատժամիջոցներ*

Թուրքիայի՝ «զրո խնդիր հարևանների հետ» դոկտրինը կրողից տարածաշրջանային ագրեսորի վերափոխումն ուղեկցվում է տնտեսական խորացող հիմնախնդիրներով: «Փխրուն» տնտեսություն ունենալը և մակրոտնտեսական վատորակ կառավարման հանգամանքները դեռևս 2018 թ.-ին երկիրը հասցրել էին լիարժեք ֆինանսական ճգնաժամի, սակայն Թուրքիան շարունակում է մնալ տարածաշրջանում ագրեսիվ քաղաքականություն վարող, որն էլ, իր հերթին, էլ ավելի մեծ ճնշում է առաջացնում տնտեսական իրավիճակի վրա: Որքան էլ տարօրինակ հնչի, հարձակողականությունն (ագրեսիան) ու ամբոխավարությունն (պոպուլիզմը) այն գործիքներն են, որոնցով այդ երկրի իշխանությունները փորձում են հակակշռել խորացող տնտեսական հիմնախնդիրները, սակայն, դրա փոխարեն, մեծացնում են մեծ «արատավոր շրջանում» հայտնվելու ռիսկը, որը, ի տարբերություն ներկա ֆինանսական «արատավոր շրջանի», կարող է, ի վերջո, երկրի քաղաքականության շրջադարձի հանգեցնել:

2020 թ.-ի սեպտեմբերի վերջին Արցախի դեմ սանձազերծված պատերազմում Թուրքիայի ուղղակի մասնակցությամբ ևս մեկ անգամ ի ցույց դրվեց, որ այդ երկիրը տարածաշրջանում ձգտում է հնարավոր բոլոր եղանակներով մեծացնել իր ազդեցությունը՝ չխուսափելով նաև ուղղակի ռազմական միջամտությունից: Եվ գաղտնիք չէ, որ Թուրքիան այս կերպ խնդիրներ է ստեղծում ոչ միայն տարածաշրջանի երկրների, այլև գլոբալ կենտրոնների հետ: Մինչդեռ ընդամենը 10 տարի առաջ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը բնութագրվում էր «զրո խնդիր հարևանների հետ» դոկտրինով, իսկ երկիրը համարվում էր ԵՄ անդամակցության խոս-

տումնալից թեկնածու[1]:

Թե ինչպես տեղի ունեցավ այս փոխակերպումը, բավական ընդգրկուն հարց է, որը չենք փորձի մեկնաբանել: Սակայն, չենք կարող չնկատել դրա հետ զուգորդված տնտեսական զարգացումները, որոնք հանգեցրին 2018 թ.-ի տնտեսական ճգնաժամին: Այդ խնդիրների համատեքստում, ֆինանսական շուկաները գերզգայուն են թուրքական հարձակողական քաղաքականության ամեն մի դրսևորման նկատմամբ. ահա թե ինչու էին Արցախյան պատերազմի օրերին մեր ուշադրությունը գրավում նաև թուրքական լիրայի արժեզրկմանը վերաբերող լուրերը:

Հարց է առաջանում, թե ինչ դեր են ունեցել բացասական տնտեսական զարգացումներն այդ փոխակերպման գործում, և այդ փոխակերպումն ինչպես է ազդում նշված զարգացումների վրա: Նմանօրինակ պարզաբանումը կարող է հնարավորություն տալ պատկերացում կազմելու Թուրքիայի միտումների մասին, ինչը կարևոր է, հաշվի առնելով տարածաշրջանում ավելի կարևոր խաղացող դառնալու՝ այդ երկրի նկրտումները:

Թուրքիայի տնտեսության զարգացումներին անդրադարձել էինք մոտ երկու տարի առաջ՝ մի կողմից իր խնդիրներով այն դիտարկելով որպես «տիպիկ զարգացող երկիր», իսկ մյուս կողմից՝ տնտեսական կառավարման վատ օրինակ[2]:

Ինչո՞ւ էինք Թուրքիան համարում «տիպիկ զարգացող երկիր»: Պատասխանը պարզ է. Թուրքիայում առաջացած տնտեսական ճգնաժամի պատճառները «դասական» էին: Երկիրը, հասնելով զարգացած շուկաների հետ միասնացման (ինտեգրման) որոշակի աստիճանի, գրավիչ է դառնում կարճաժամկետ սպեկուլյատիվ ֆինանսական հոսքերի համար, որոնք զարգացած շուկաներում առկա ցածր տոկոսադրույքների պայմաններում բարձր եկամտաբերություն են փնտրում զարգացող երկրներում: Սակայն, երբ առաջիններում տոկոսադրույքները բարձրանում են (ինչպես 2015 թ.-ից՝ ԱՄՆ-ում), առավել զգայուն զարգացող երկրներից սկսվում է կապիտալի արտահոսք, ինչպես նաև տեղի են ունենում ազգային արժույթի արժեզրկում ու կազմակերպությունների սնանկացումներ: Իսկ Թուրքիան, ավանդաբար, դասվում է հենց այդ երկրների շարքին՝ Բրազիլիայի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի և Հարավաֆրիկյան Հանրապետության հետ մեկտեղ[3]: Նման «փխրուն» զարգացող եր-





ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Թուրքիայի դրամավարկային ցուցանիշները
Աղբյուրը՝ Թուրքիայի կենտրոնական բանկ և Investing.com

[6] How Turkey Went from a Policy of 'No Problems with Neighbors" to Problems Everywhere. Middle East Online. https://middle-east-online.com/en/how-turkey-went-policy-%E2%80%98no-problems-neighbors%E2%80%9D-problems-everywhere

[2] Ն. Կարապետյան, Ինչ չանել՝ զարգացող շուկաներին: Թուրքական ճգնաժամի դասերը, հուլիս, 2018 թ., ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոն, https://asue.am/amberd/publications/analytics/do-not-do-it-emerging-markets-lessons-turkish-crisis:

[3] Ներկայացված երկրները մասնագիտական շրջանակներում ընդունված է անվանել «Փխրուն հնգյակ» (Fragile Five), քանի որ դրանց տնտեսությունները չափազանց շատ են կախված զարգացած երկրների անկայուն ֆինանսական հոսքերից:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ֆինանսական շուկայով պայմանավորված «արատավոր շրջան» Թուրքիայում[4]

կըրներում ճգնաժամի այսպիսի կառուցակարգը «դասական» է դարձել, և Թուրքիան, այս առումով, առաջին «զոհը» չէ:

Սրան զուգահեռ, Թուրքիայում լուրջ խնդիրներ կան՝ կապված մակրոտնտեսական կառավարման հետ: Տնտեսագիտական «բութ մատի կանոնը»՝ ըստ որի կենտրոնական բանկի առաջնային խնդիրը գնաճի կարգավորումն է, կարծես թե, Թուրքիայի համար չէ: Փոխարենը, կենտրոնական բանկը էժան վարկավորմամբ ձըգտում է երկիրը դուրս բերել լճացումից (ստագնացիայից), որի «գինը» բարձր գնաճն ու լիրայի արժեզրկումն են: Այնուհետև, արժեզրկումը կանխելու նպատակով, կենտրոնական բանկը շուկա է «նետում» արտարժութային պահուստներ, սակայն ազգային արժույթի արժեզրկումը կասեցնել չի հաջողվում[5]: Սա էլ, իր հերթին, բնականաբար, խթանում է կապիտալի արտահոսքը (հետևաբար՝ տնտեսության անկումը) և գնաճը, ու այսպես շարունակ: Ըստ էության, սկիզբ է առնում մի «արատավոր շրջան», որը դեռևս անշրջանցելի է:

Թերևս, իրավիճակի պատասխանատվությունը մասնագիտական գերատեսչության վրա բարդելու նպատակով ս.թ. նոյեմբերին պաշտոնից հեռացվեց Թուրքիայի կենտրոնական բանկի նախագահը, ինչի արդյունքում լիրայի փոխարժեքը որոշ չափով վերականգնվեց: Սակայն, խնդիրը, վստահաբար, պաշտոնյայի մասնագիտական կարողություններով չի պայմանավորված, այլ այն իրողությամբ, որ կենտրոնական բանկը գործնականում զրկված է անկախությունից և, ըստ էության, քաղաքական խնդիրներ է լուծում: Ավելին, ապագայում «էժան փողերի» քաղաքականությամբ տնտեսության խթանում ապահովելու՝ Էրդողանի վարչակազմի ճնշումները դժվար թե թուլանան, այլ հակառակը՝ կարող են ավելի մեծանալ: Սա, ըստ էության, տնտեսական ամբոխավարության վառ դրսևորում է, երբ համապատասխան որոշումներում առաջնայնությունը տրվում է չափազանց կարճաժամկետ արդյունքի ապահովմանը՝ զոհելով հասարակության բարեկեցությունը երկարաժամկետ հատվածում:

Էրդողանի վարած քաղաքականության ազդեցությունը Թուրքիայի տնտեսության

[4] Կազմել է հեղինակը:

[5] Այսպես՝ հոկտեմբերի վերջի դրությամբ արտարժութային պահուստները տարեսկզբի համեմատ նվազել են գրեթե կրկնակի և արդեն ցածր են անգամ նվազագույն շեմ համարվող՝ ներմուծման երեք ամսվա ծածկույթից, մինչդեռ լիրան շուրջ 30% արժեզրկվել է:

վրա չի սահմանափակվում միայն կենտրոնական բանկին անկախությունից զրկելով: Բավական է հիշել շուրջ մեկ տարի առաջ ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի նամակն ուղղված Էրդողանին, որտեղ բառացիորեն ասվում էր հետևյալը. «....ես չեմ ուզում պատասխանատու լինել Թուրքիայի տնտեսությունն ավերելու համար, ինչը կարող եմ անել»: Դ. Թրամփն ակնարկում էր ԱՄՆ-ի կողմից հնարավոր պատժամիջոցների կիրառումը Թուրքիայի նկատմամբ՝ արտաքին քաղաքականությունը չփոխելու պարագայում[6]: Այս տարվա հոկտեմբերին արդեն ԵՄ-ն էր քննարկում Թուրքիայի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հարցեր, իսկ Սաուդյան Արաբիան, Մարոկկոն և Ալժիրը (փաստորեն՝ 2021 թ. հունվարից՝ նաև Հայաստանը) այժմ արգելափակում են թուրքական ապրանքների ներմուծումը[7]: Ընդ որում, եթե պատժամիջոցների մասին քննարկումները դեռ սպասումների մակարդակում բացասական ներգործություն են ունենում Թուրքիայի ֆինանսական շուկաների և փոխարժեքի վրա, ապա ապրանքների ներմուծման արգելափակումն ուղղակիորեն վերափոխում է արտահանման ցուցանիշները:

Ինչո՞ւ են երկրի իշխանությունները շարունակում հարձակողական և ամբոխավարական քաղաքականությունը՝ իմանալով, որ այդպիսով ավելի ու ավելի խորն են ընկղմվում տնտեսական «ճահճում»: Չէ՞ որ Էրդողանի, այսպես ասած, «Օսմանյան կայսրությունը վերականգնելու» քաղաքականությունն ամենից առաջ ամուր տնտեսություն է պահանջում: Փոխարենն այս քաղաքականությունը դառնում է գործիք, թուրքական ազգայնականությունը սրելով, պահել իր հեղինակությունը:

Հարց է առաջանում՝ արդյոք միջազգային խաղացողներին ձեռնտու է այն, ինչ կարող է տեղի ունենալ Թուրքիայի տնտեսության ներկա միտումները շարունակվելու դեպքում: Տնտեսության համաշխարհայնացվող կառուցվածքում մեկ երկրի խնդիրներն արագորեն կարող են փոխանցվել մյուսին: Այսպես՝ հայտնի է, որ իսպանական բանկերին թուրքական կազմակերպությունները և բանկերը պարտք են մոտ 62, ֆրանսիական բանկերին՝ մոտ 29, բրիտանական բանկերին՝ մոտ 12 մլրդ ԱՄՆ դոլար, և այսպես շարունակ: Ասել է թե՝ «եթե թուրքական տնտեսությունը փլուզվի, եվրոպական բանկերը նույնպես կընկնեն[8]»: Իրենց այս «լծակը» լավ են գիտակցում նաև Թուրքիայում և, վստահաբար, հաշվի առնում իրենց գործողություններում:

Թերևս, այս նուրբ «հավասարակշռության» վրա է, որ Թուրքիան կարողանում է շարունակել իր քաղաքականությունը: Որքան էլ տարօրինակ հնչի, Թուրքիայի դիմադրողականությունն արտաքին քաղաքականության մեջ ապահովում է այն, որ վերջինս աշխարհի համար սպառնալիք է՝ ոչ միայն տարածաշրջանում վարվող ագրեսիվ քաղաքականությամբ, այլև տնտեսական տեսակետից: Իսկ Էրդողանի քաղաքական թիմի դիմադրողականության երաշխիքը ներքին քաղաքականության մեջ ամբոխավարությունն է, այդ թվում՝ տնտեսական:

Սակայն, ակնհայտ է, որ թե՛ առաջին, թե՛ երկրորդ մեթոդի ապագան մշուշոտ է: Նախ՝ աշխարհի հետ սպառնալիքներով «խաղալը», անկասկած, անվերջ տևել չի կարող: Եվ երկրորդ՝ գաղտնիք չէ, թե ինչ արդյունքների է հանգեցնում տնտեսական ամբոխավարությունը զարգացող երկրներում: Այս մասին ներկայացնենք մեկ հատված հայտնի տնտեսագետ, ԱՄՆ ԴՊՀ նախկին նախագահ Ալան Գրինսպանի «Անկայունության դարաշրջանը» գրքից.

«Ինչո՞ւ էին 1970-ական, 1980-ական և 1990-ական թվականներին Լատինական Ամերիկայի երկրներում ճգնաժամերը հաջորդում մեկը մյուսին... Պատասխանը պարզ է. փոքր բացառություններով, Լատինական Ամերիկան չէր կարողանում

[6] Donald Trump's bizarre, threatening letter to Erdoğan: 'Don't be a fool'. The Guardian. https://www.theguardian.com/us-news/2019/oct/16/trump-letter-erdogan-turkey-invasion

[7] Morocco's restrictions on Turkish goods raise suspicions it's joined Saudi boycott. Middle East Eye. https://www.middleeasteye.net/news/morocco-turkey-saudi-arabia-boycott-goods

[8] If the Turkish economy collapses, banks in Europe will "fall". Greek City Times. https://greekcitytimes.com/2020/09/20/if-the-turkish-economy-collapses-banks-in-europe-will-fall/

ազատվել տնտեսական ամբոխավարությունից, որը խանգարում էր ամբողջ մայրցամաքին մրցակցել մնացյալ աշխարհի հետ»:

Ահա թե ինչու, Գրինսպանը ամբոխավարության վերելքը, գլոբալ տաքացման և ահաբեկչության հետ մեկտեղ, համարում էր XXI դարի ամենաառանցքային սպառնալիքներից[9]:

Վերը նշված պատճառներով՝ այդ թվացյալ հավասարակշռության խախտումը Թուրքիային կարող է նետել ավելի մեծ «արատավոր շրջանի» մեջ, քան տնտեսական անկման, փոխարժեքի արժեզրկման ու գնաճի՝ հոդվածում նկարագրված շղթան է: Հետևանքն արդեն կարող է ներառել իրական և ցավոտ պատժամիջոցներ, հարաբերությունների հետագա վատթարացում ու մեկուսացում: Այս պայմաններում պետք է սպասել երկրի արտաքին և ներքին քաղաքականության մեջ շրջադարձերի ու ամբոխավարական հոսանքների թուլացման, քանի որ, ի վերջո, Թուրքիայում էլ հասկանում են, որ իրենց տնտեսական հաջողություններն առավելապես պայմանավորված են եղել համաշխարհայնացմամբ ու տնտեսական միասնացմամբ, որոնց ընձեռած հնարավորությունները երկրում կարողացել են ճիշտ օգտագործել:

9 Տես Greenspan, A. (2008). The age of turbulence: Adventures in a new world. Penguin.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարապետյան Ն., Ինչ չանել՝ զարգացող շուկաներին: Թուրքական ճգնաժամի դասերը, հուլիս, 2018 թ., ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոն, https://asue.am/amberd/publications/analytics/do-not-do-it-emerging-markets-lessons-turkish-crisis
2. Greenspan, A. (2008). The age of turbulence: Adventures in a new world. Penguin.
3. As Turkey's economy goes, so goes its ambitions. Geopolitical Futures, https://geopoliticalfutures.com/as-turkeys-economy-goes-so-goes-its-ambitions/
4. Donald Trump's bizarre, threatening letter to Erdoğan: "Don't be a fool". The Guardian. https://www.theguardian.com/us-news/2019/oct/16/trump-letter-erdogan-turkey-invasion
5. How Turkey Went from a Policy of "No Problems with Neighbors" to Problems Everywhere. Middle East Online, https://middle-east-online.com/en/how-turkey-went-policy-%E2%80%98no-problems-neighbors%E2%80%9D-problems-everywhere
6. If the Turkish economy collapses, banks in Europe will "fall". Greek City Times, https://greekcitytimes.com/2020/09/20/if-the-turkish-economy-collapses-banks-in-europe-will-fall/
7. Morocco's restrictions on Turkish goods raise suspicions it's joined Saudi boycott. Middle East Eye, https://www.middleeasteye.net/news/morocco-turkey-saudi-arabia-boycott-goods

Нарек КАРАПЕТЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, аспирант

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

ТУРЕЦКАЯ УГРОЗА МИРУ И ЭКОНОМИЧЕСКИЙ «ПОРОЧНЫЙ КРУГ»

Превращение Турции из приверженца доктрины «ноль проблем с соседями» в регионального агрессора сопровождалось нарастанием экономических проблем. Несмотря на то, что «хрупкость» экономики и неосмотрительная макроэкономическая политика привели страну к полному финансовому кризису в 2018 году, Турция продолжает проводить агрессивную политику в регионе, что приводит к еще большему давлению на экономику. Как ни странно, агрессивная и популистская политика используется в качестве инструмента для уравновешивания растущих экономических трудностей, но вместо этого они повышают риск большого «порочного круга», который, в отличие от нынешнего финансового «порочного круга», может привести к политическому повороту для страны.

Ключевые слова: *турецкая лира, отток капитала, “хрупкая” экономика, дешевое кредитование, санкции*

Narek KARAPETYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE, PhD student

GEOECONOMIC CHRONICLE

TURKISH THREAT FOR THE WORLD AND THE ECONOMIC “VICIOUS CIRCLE”

The transformation of Turkey from a holder of the “zero problems with the neighbors” doctrine to regional aggressor was accompanied by mounting economic problems. Even though the "fragility" of the economy and implemented imprudent macroeconomic management brought the country to a complete financial crisis in 2018, Turkey continues pursuing aggressive policies in the region, which leads to more pressure on the economy. Curiously enough, aggressive and populist policies are used as tools to balance the growing economic difficulties, but instead - they elevate the risk of a big “vicious circle”, which unlike the current financial “vicious circle”, can bring to a political turn for the country.

Keywords: *turkish lira, capital outflow, “fragile” economy, cheap lending, sanctions*